ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի թափուր պաշտոնի համար՝ 0,625 դրույքաչափով:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը: https://escs.am/am/news/ 4652

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթը անց է կացվելու 2022թ. օգոստոսի 12-ին՝ ժամը 10: 30-ին, ք. Սիսիան, Սիսական 17 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 8.30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը մինչև 2022թ. օգոստոսի 9-ը, ժամը 17:30-ը:

Մրցույթին մասնակել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել նաև sisian.am կայքում:

Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝

https://escs.am/am/news/ 11978

Տեղեկությունների համար զանգահարել՝ 028323280 հեռախոսահամարին կամ այցելել «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ:

Հասցե՝ ք.Սիսիան, Սիսական 17

Էլ. փոստ՝ tiv1nuh@sisian.am